ԱՆԱՀԻՏ ԵԳԱՆՅԱՆ

ԿԱՐԼ ԳՈՒՍՏԱՎ ՅՈՒՆԳԻ ԱՐՔԵՏԻՊԵՐԸ ԹԵԴ ՀՅՈՒԶԻ «CROW» (ԱԳՌԱՎ) ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵՋ

Գրականությունը, լինելով արվեստի մաս, իր հիմքում ունի փիլիսոփայական և հոգեբանական տեսակետների և դրույթների համապատկեր: Կան գրողներ, որ բացեիբաց հայտարարում են, թե իրենց ստեղծագործությունը հետևանքն է այս կամ այն հոգեբանական կամ փիլիսոփայական հոսանքի: Հենց Թեդ Հյուզը ճանաչվեց, ինչպես գրում է Ալվարեզը, անգլիացի միակ հետպատերազմյան պոետը, որի պոեզիան համազոր էր ժամանակակից հոգեբանության վերլուծությանը՝ բռնի պատմական կոնտեքստում: Հյուզի ստեղծագործության փիլիսոփայական հիմունքը Շոպենհաուերյան «կենսակամեցման» (will to live) սկզբունքն էր, միևնույն ժամանակ հոգեբանությունը նա ընկալում էր Կարլ Գուստավ Յունգի արքետիպերի լույսի ներքո:

Հոգեկան գիտակցական և ենթագիտակցական դինամիկայի և կառույցի, համընդհանուր հոգեկան պատկերների (որոնք գալիս են դարերի խորքից) նկարագրության հիմնարար տեսություն է ստեղծել Կարլ Յունգը: Այդ հոգեկանի a priori նախնական կերպարները, որոնք իրենց գրությամբ պարտական են զուտ ժառանգականությանը, Յունգն անվանում էր կոլեկտիվ անգիտակցականի արքետիպեր:

Արքետիպը գալիս է լատինական «տիպոս» (կնիք, հետք) բառից և մատնանշում է արխաիկ բնույթի որոշակի գոյավորում, որը ներառում է դիցաբանական մոտիվը (արխե - հունարեն նախա):

Դիցաբանական մոտիվները մաքուր ձևով հանդես են գալիս միֆերում, հեքիաթներում, ժողովրդական բանահյուսության մեջ: Արքետիպերի հայտնագործումը թույլ տվեց Յունգին նկարագրել զուգահեռները մարդկանց

երազներում և տեսիլքներում ծնվող անգիտակցական պատկերների և բոլոր ժամանակների և ժողովուրդների ավանդազրույցներում և կրոններում առկա ունիվերսալ մոտիվների միջև:

Միֆերում, հեքիաթներում, կրոններում, գաղտնի ուսմունքներում և արվեստի նմուշներում, խառնակ, օտարոտի, տարօրինակ պատկերները վերածվում են սիմվոլների, ավելի ու ավելի կատարելագործվում ձևի մեջ և առավել ընդհանրական դառնում իրենց բովանդակությամբ:

Յունգը քարոզում էր վերադարձ արքետիպիկ կերպարների նախնական իմաստին ու նշանակությանը, ինչը համահունչ է Թեդ Հյուզի ստեղծագործությունների հիմքում ընկած սկզբունքներին:

Հյուզի ողջ ստեղծագործությունը արքետիպիկ մտածողության ակնհայտ օրինակ է: Ավելին, իր ստեղծագործությունների բուն կերպարները – (Crow, Cave Birds, Lupercal, Wodwo) սիմվոլիկ են և իմաստային տեսակետից չեն համապատասխանում կայացած պատկերացումներին ու կերպարներին: Այդ բառերի և՛ հնչողությունը և՝ իմաստը (վերցված լատիներենից և հին կենտերենից) արխաիկ են. Crow-ն պարզապես ագռավ չէ (Raven), դա հինավուրց դիցաբանական թռչուն է, Wodwo-ն յուրահատուկ կիսով չափ մարդկային, կիսով չափ կենդանական հոգի է, որը «ֆիզիկապես» հիշեցնում է հունական դիցարանի կենտավրոսին, Lupercal-ը հեղինակի կողմից հորինված բառ է, որը ծագում է լատինական lupus /գայլ/ բառից:

«Crow» ժողովածուն համարձակորեն կարելի է անվանել Նոր Աստվածաշունչ, ավելի ստույգ, «Ագռավ» -ը Աստվածաշնչի վերակերտման փորձ է: Բնականաբար, բիբլիական սյուժեների մեկնաբանումն ու պատճառահետևանքային կապերը XX դարի հեղինակի մոտ տարբերվում է արխաիկից, բայց նախակերպարները, այսինքն՝ արքետիպերը, նույնն են:

Սկսած մարդկային հավերժական արատներից, որոնց բնույթը չի փոփոխվում ձևի, ժամանակի և տարածության ազդեցությունից, ներառյալ համապարփակ սիրո հասկացությունը և ցայսօր չուսումնասիրված ենթագիտակցությունը. այդ ամենով է հագեցած Հյուզի Նոր Աստվածաշունչը.

Այսպես, յոթերորդ օրը
Օձը հանգստանում էր,

Աստված մոտեցավ նրան.
«Ես հնարել եմ մի նոր խաղ», - ասած նա
«Տեսնու՞մ ես այս խնձորը
Ես քամում եմ այն և նայիր - խնձորօղի»:
Աղամը խմեց և ասաց. «Եղիր իմ Աստվածը»
Եվան խմեց և բացեց իր ոտքերը:
... Եվ ամեն ինչ գնաց դժոխք : [1]

(Խնձորի ողբերգությունը)

Ակնհայտ է, որ այստեղ նկարագրվում է ադամական մեղսանկումը, բայց ոչ թե մարդու կողմից, կեցության ճանաչման դասական իմաստով, այլ Բաքոսի պաշտամունքի արմատացած պաշտամունքը: Նվազ կարևոր չէ նշել, որ կնոջ և տղամարդու վարքը ևս բավականին արքետիպիկ է. տղամարդը կորցնում է Բանականությունը և պատրաստ է ճանաչել Օձին որպես իր աստված, իսկ կինը զգայականության մարմնավորում, տրվում է գայթակղություններին:

Հյուգի հիմնական հերոսները Աստված և Ագռավը (Crow) համապատասխանում են Յունգի գիտակցականին ու անգիտակցականին (կարգ ու քաոս).

Տղամարդու և կնոջ մարմինները պառկած էին առանց հոգի,
Բթորեն հորանջելով, հիմարաբար աչքերը չռելով, ներտ
Եդեմի ծաղիկների վրա :
Աստված խորհում էր:

---

[1] So, on seventh day
The serpent rested,
God came up to him:
" I have invented a new game," he said.
... " You see this apple?
I squeeze it and look -cider".
Adam drank and said: " Be my God"
Eve drank and opened her legs.

... And everything goes to hell.

(Apple tragedy)

Խնդիրը այնքան մեծ էր. այն քաշեց նրան քնի մեջ
Ագռավը ծիծաղում էր...[2]

Այսպիսով Աստված քնել է. Բանականությունը (գիտակցականը)՝ անջատվել, անգիտակցականը մտել է իր տիրույթը. և Ագռավը մարդկանց մեջ ներմուծել է անարժան հոգիներ՝ խաղալով նրանց հետ չարաբաստիկ խաղ.

...Տղամարդը արթնացավ քարշ գալով խոտի միջով:
Կինը արթնացավ տեսնելու նրա գալը
Ոչ մեկը չգիտեր ինչ էր պատահել
... Աստված շարունակում էր քնել:
Ագռավը շարունակում էր ծիծաղել:[3]
(Մանկական չարաճճիություն)

Այստեղ քարոզվում է հասարակական այն միտքը, թե «Բանականության նինջը ծնում է հրեշներ» (Գոյա): Գիտակցության թմրեցումը ազատագրում է հսկայածավալ անգիտակցական զորություն, որը հենց երազների թերապիայի և վերլուծության օբյեկտն է, որպես Յունգի հիմնական մեթոդ:

Անհատականության հիմնական կառույցներից յուրանքանչյուրը, իր հերթին, արքետիպ է: Դրանց շարքում կարելի է նշել էգոն, Պերսոնան, Ստվերը, Անիման, Անիմուսը և ինքնությունը: Պերսոնան (Հյուգի Աստված) այն է, ինչպես մենք ներկայանում ենք աշխարհին, դա բնավորությունն է, որը մենք ընդունում ենք,Պերսոնայի միջոցով մենք շփվում ենք մյուսների հետ: Պերսոնան ունի բացառապես գիտակցական կառույց: Այն ներառում է մեր

---

[2] Man's and woman's bodies lay without souls,
Dully gaping, foolishly staring, inert
On the flowers of Eden.
God pondered.
The problem was so great, it dragged him asleep
Crow laughed...

[3] ... Man awoke being dragged across the grass.
Woman awoke to see him coming
Neither knew what had happened
... God went on sleeping.
Crow went on laughing.
(A childish prank)

սոցիալական դերերը, անհատական ոճը, և բոլոր այն հատկությունները,որոնք ընդունում ենք և գնահատում: Ստվերը (Յուզի Ագռավը) անհատական անգիտակցականի կենտրոնն է, գիտակցությունից դուրս մղված նյութի թանձրույթը:Այն ներառում է հակումներ, ցանկություններ և հիշողություններ, որոնք հերքվում են անհատականության կողմից, որպես իր Պերսոնային ամհամատեղելի կամ հակասող սոցիալական ստանդարտներին և իդեալներին: Բայց Ստվերը մեր էության բաղկացուցիչ մասն է, այն չի կարելի պարզապես մեկուսացնել: Առանց ստվերի մարդը չի կարող լիարժեք անհատականություն լինել, դա երկսայրի ծաղկանկար է, որ հերքում է բոլորիս Չարի և Բարու ամբիվալենտությունը: Ստվերը հոգու բացասական զորություն էլ չէ: Դա բնազդային հավաքույթ է ինքնակամության, կենսականության մեր ստեղծագործության զորեղ ակունք:

Այս տեսանկյունից, Թեդ Յուզի ստեղծագործությունը, որի նյութը նա քաղել է մեծամասամբ անգիտակցականից ստանում է այն փիլիսոփայական հիմնավորումը որը կոչվում է շոպենհաուերյան «կենսակամեցում»:

Ո՞վ է ուժեղ քան հույսը – Մահը
Ո՞վ է ուժեղ քան կամքը – Մահը
Ուժեղ քան սերը –Մահը
Ուժեղ քան կյանքը – Մահը
Բայց ո՞վ է ուժեղ քան *մահը*
Ես, ակնհայտորեն
Անցա, *Ագռավ*
(Զննում արգանդադռանը) [4]

---

[4] Who is stronger than hope? Death
Who is stronger than will? Death
Stronger than love? Death
Stronger than life? Death
But who is stronger than death?
Me, evidently.
Pass, Crow.
(Examination at the womb-door)

Մահը սասանում և ժամանակի ու տարածության մեջ դադարեցնում է այն ամենն, ինչ մարդը Կյանք է անվանում: Մահն ամենազոր է դառնում՝ ընդհատելով կյանքի ընթացքը երբ և ինչպես կամենա: Մարդն անպաշտպան է մնում «իր ժամի» սպասման անխուսափելիության առջև: Եվ միայն «կյանքի կամեցումը», կամքն առ վերածնունդ և նոր կերտում, ենթագիտակցության լաբիրինթոսի ընդերքներից, մարդու կեցությունն իմաստավորվում է, լցնում կյանքը լույսով և սիրով՝ վերականգնելով նրա ներքին հավասարակշռությունը: Crow-ն (Հյուզի ագռավը) հենց այդ «կենսակամեցումն է», այն հեղինակի մտքի անգիտակցական պտուղն է, այն մարդու համար անհասկանալի, բայց խորապես իր ներսում նստած բնազդն է՝ ինքնապահպանման և վերածննդի:

Արքետիպիկ կերպարներով հագեցվածությունը բնորոշել է «Crow»-ի ողջ սյուժետային գիծը: Բառացիորեն յուրաքանչյուր կերպար, որ հանդիպում է այդ ժողովածուի բանաստեղծություններում, կարող է դիտարկվել որպես կոգնիտիվ կառույց:

Հյուզին նշանակալի և վառ է պատկերանում սիրո արքետիպը. տղամարդու և կնոջ սիրո, որ անսահման է և քանդում է ժամանակի և տարածության բոլոր օրենքները:

Նա սիրում էր և նա էլ էր սիրում նրան
Նրա համբյուրները ծծում էին (կլանում) նրա ամբողջ անցյալը և
ապագան, կամ փորձում էին...

կամ

Նա սեղմում էր նրան այնքան պինդ, որ կյանքը
Չկարողանար քաշել նրան այդ վայրկանից
Նա ուզում էր ամբողջ ապագան դադարեր ... [5]

Հյուզի սերն այն աստիճան իռացիոնալ է, ամենակուլ, լիովին հենված բնազդներին (ի դեպ, Յունգը գտնում է, որ արքետիպերը հանդիսանում են

---

[5] He loved and she loved him
His kisses sucked out her whole past and future or tried to ...
or He gripped her hard so that life
Should not drag her from that moment
He wanted all future to cease ...

մտածողության միավորներ իսկ բնազդները՝ վարքի միավորներ), որ այդ սիրո յուրաքանչյուր արտահայտում *էքստրեմալ է:*

Նրա գրկախառնությունը մի ահռելի ճնշում էր
Տպելու նրան իր ոսկորների մեջ...
Նրա բառերը բանակներ էին զավթում
Նրա ծիծաղը մարդասպանի մահափորձ էր ...
Նրա հայացքները վրիժառության գնդակների
արգելակողներ էին
... Եվ նրանց խորը ճիչերը սողում էին հատակի վրայով
Ինչպես մի գազան արգելակված մի հսկայական
թակարդում ...[6]

Բանաստեղծություններից մեկում՝ «The Black Beast»-ում (Սև գազան) հիշատակվում է մեկ այլ բիբլիական թեմա՝ եղբայրասպանությունը: Արքետիպի համար էական չեն դերերը կամ գործող անձինք, կարևոր է բուն փաստը, ինքը՝ իրավիճակը. Crow-ն այստեղ մարմնավորում է բիբլիական Կայենին:

Ագռավը սպանեց իր եղբորը և տակնուվրա արեց նրան
ապշահար նայելու նրա գույնին ...[7]

«Crow» ժողովածուի մեջ Աստվածաշնչի «վերածննդի» փորձը, կարելի է ասել, որ հաջողվել է: Ժողովածուի յուրաքանչյուր բանաստեղծություն վերականգնում է բիբլիական որևէ սյուժետի պատկեր: Բայց, յուրահատուկ նշանակալիության պատճառը, ըստ որի Թեդ Հյուզի բոլոր ստեղծագործություններից շեշտվում է հենց «Crow»-ն, այն է, որ ինքը՝ ժողովածուն, ինչպես և Աստվածաշունչը ունիվերսալ նախատիպեր են,

---

[6] Their heads fell apart into sleep like the two halves
Of a lopped melon, but love is hard to stop
In their entwined sleep they exchanged arms and legs
In their dreams their brains took each other hostage
In the morning they wore each other's face.
(Lovesong)

[7] Crow killed his brother and turned him inside
out to stare at his color ...

մտածողության և վարվելակերպի պլատֆորմներ (հիմնասյուներ), էկզիստենցիայի համամարդկային «կոդեքսներ»:

Կարլ Գուստավ Յունգի արքետիպերի տեսությունը Թեդ Հյուզի պոետիկ կոնտեքստում՝ անփոփոխ ժամանակն է գոյության իմաստավորման հանգուցալուծված «ռեբուսով»:

Գրականության ցանկ

1. Ted Hughes: Hawk in the Rain. Faber & Faber. London 1957.
2. Ted Hughes: Crow. Faber & Faber. London 1970.
3. Leonard M. Scigaj: The Poetry of Ted Hughes. University of Iowa Press. Iowa City 1986.
4. Jung C. G.: Instinct and the Unconscious Ed. J. Campbell. N.Y. 1971.
5. Jung C. G.: Gegenwart und Zukunft: Das C. G. Jungs Lesebuch. Olten: Walter 1983.
6. Jung C. G.: Jung Speaking: Interviews and Encounters. L .Thames and Wudson 1978.
7. Jung C. G Essays –London 1982